

Կ-684-09.07.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 182.1-ին հոդվածում «ստուգում» բառից հետո լրացնել «(բացառությամբ հարկային հսկողության շրջանակներում իրականացվող ստուգման)» բառերը:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել նոր 182.6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 182.6. Հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի աշխատանքին խոչընդոտելը

1. Իր լիազորությունների շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244²-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «և 170¹³» բառերը փոխարինել «, 170¹³ և 182.6» բառերով:

2) 2-րդ մասում «տեսչության պետերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքի 182.6 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ հարկային մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30-րդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-684-09.07.2020-ՊԻ-011/1

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 182.1-ին

հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 182.1. Ստուգում եւ հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելը

Իր լիազորությունների շրջանակում ստուգումներ, ինչպես նաեւ հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով, հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող փաստաթղթով ստուգում, ինչպես նաեւ հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ ստուգվող, ինչպես նաեւ հարկային հսկողություն իրականացվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման, ինչպես նաեւ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ եւ այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնելված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրիսնապատիկի չափով:»:

հոդվածում «ստուգում» բառից հետո լրացնել «(բացառությամբ հարկային հսկողության շրջանակներում իրականացվող ստուգման)» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 244.14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ:

«Հոդված 244.14. Պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելու վերաբերյալ գործերի քննությունը

Սույն օրենսգրքի 182.1 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում եւ վարչական տույժեր նշանակում է համապատասխան ստուգումներ, ինչպես նաեւ հարկային հսկողություն իրականացնող պետական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:»:

Օրենսգիրքը լրացնել նոր 182.6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 182.6. Հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի աշխատանքին խոչընդոտելը

1. Իր լիազորությունների շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնրված կամ այլ կերպ կնրված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրիսնապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 244²-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «և 170¹³» բառերը փոխարինել «, 170¹³ և 182.6» բառերով:

2) 2-րդ մասում «տեսչության պետերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքի 182.6 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ հարկային մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերը:

Հոդված 34. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30-րդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-684-09.07.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Nº	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառը փոխարինել «լրացումներ և փոփոխություն» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Հոդված 182.1. Ստուգում եւ հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմինների աշխատանքին խոչընդոտելը Իր լիազորությունների շրջանակում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

		ստուգումներ, ինչպես նաև հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հրամանով, հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող փաստաթղթով ստուգում, ինչպես նաև հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ ստուգվող, ինչպես նաև հարկային հսկողություն իրականացվող ստորաբաժանում նրա մուտք գործելն արգելելը կամ ստուգման, ինչպես նաև հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ ել այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն		
--	--	---	--	--

			աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:»» բառերը փոխարինել «հոդվածում «ստուգում» բառից հետո լրացնել «(բացառությամբ հարկային հսկողության շրջանակներում իրականացվող ստուգման)» բառերը:» բառերով:		
3.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածով ՎԻՎ օրենսգրքի 244.14-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է: Նախագծից հանվել է նշված դրույթը: Նախագծի 2-րդ հոդվածով ՎԻՎ օրենսգիրքը լրացվել է նոր 182.6-րդ հոդվածով	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն		Առաջարկվում է Նախագծով ՎԻՎ օրենսգիրքը լրացնել նոր 182.6-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 182.6. Հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի աշխատանքին խոչընդոտելը 1. Իր լիազորությունների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է

			շրջանակում հարկային հսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված պետական մարմնի հանձնարարագրով կամ հարկային հսկողության հիմք համարվող այլ փաստաթղթով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները չկատարելը կամ տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային հսկողություն իրականացվող տարածք կամ շինություն նրա մուտք գործելն արգելելը կամ հարկային հսկողության նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ նրան չտրամադրելը կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող հարկային հսկողության ընթացքին այլ կերպ խոչընդոտելը կամ կապարակնքված կամ այլ կերպ	
--	--	--	---	--

			կնքված տարածքների կամ գույքի պահպանությունը չապահովելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ Երկու հարյուրիսնապատիկի չափով: 2. Նույն արարքը, եթե կատարվել է կրկին կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ, վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի Երկու հարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝	
--	--	--	---	--

			հինգհարյուրապատիկի չափով:»:		
5.	ՀՀ կառավարություն		Առաջարկվում է Նախագծում նախատեսել նոր դրույթ՝ ՎԻՎ օրենսգրքի 244²-րդ հոդվածում կատարելով հետևյալ լրացումը և փոփոխությունը, մասնավորապես՝ նշված հոդվածի՝ 1) 1-ին մասում «և 170¹³» բառերը փոխարինել «, 170¹³ և 182.6» բառերով: 2) 2-րդ մասում «տեսչության պետերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքի 182.6 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ հարկային մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերը:	Ընդունվել է, Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվել է ՎԻՎ օրենսգրքի 244 ² -րդ հոդվածում լրացում և փոփոխություն նախատեսող դրույթ:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30- րդ օրը» բառերով:		
--	--	--	---	--	--